

ԶԳԵՍՏԸ ԻՒ ԶԱՐԴ.

Կանանց. — Եյս գաւառի կանացի առանձնաշատուկ հանդերձը արդէն վերանայու վրայ է և միմիացն պառաւների վրայ կարելի է նը-կատել, այն էլ ոչ բոլորի։ Այժմ մեծ մասամբ վրացնակ են հագնում, վրայ տարազով գյուլս կապում։ Խակ ձալալ-օղլում և Ծուլավէրում ե-ր ու ու են եւրոպական հանդերձ և եւրոպական զիլսարիւ։

Նախին, տիգական հանդերձն էլ մի առանձին տարազ չի ներ-կացանում. ուս մի խառնուրդ է Ղարաբաղի և վրացական տարազնե-րին Աւրեմն հաւանական է, որ կամ այս տեղի տարազն էլ նման է եղել Ղարաբաղի տարազին և ենթարկուել է վրացականի ազգեցու-թեան և կամ՝ Ղարաբաղի գաղթականները մտցնելով իրենց տարազը սրանց մէջ, բոլորովին արտաքսել են տեղականը։

Կանացք հագնում են շապիկ, որ իջնում է մինչև ծնկները և երկար թևեր ունի. կարում են հասարակ կտաւից։

Քայլբնկըրը կարում են շիլս կողուած կտորից, որ հաստ. բամ-րափեաց կտոր է։ Սա խոնջանով հանդւտառում է առջելից, ոչ մի բացուածք չունի. իջնում է մինչև կրնկները, այնպէս որ փոքր ինչ երկում է, այս պատճառով էլ ծնկից ներքև հարուստները՝ կարմիր թաւիչ, իսկ միջակները կարմիր շիլյակինի (դարձեալ բամբակեաց բա-րակ կտոր) են քաշում, և ծայրում կիսավիտոն կարում մ։

Եյս սովորական երկար շապիկ և վարտիկ (շապինկերի) վրայ հագնում են արխալուն, որ կարում են գունաւոր շմէլց և ամբողջովին բամբա-կում. Սա զրկելով ամբողջ իրանը՝ նաւուճով սեղմեռում է մէջքին, յափ-րաստով կոճկուած կրծքին և լայն բանցըներով իջնում մինչև ծընկ-ները։ Ռոնի մինչև յաստակը հասնող թևեր, որ հետզհետէ նեղանալով դաստակի մօս կոճկուած են։ Երկու կող բերին կան մի մի դրապան։

Արխալունից վրացից հագնում են իւրիւ։ Սա կարում են բանեա-զիայից։ Եւրիւն բաղկացած է երկու մասից՝ վերևի, որ գրկում է ամ-բողջ իրանը, անթե է և կուրծքը չափաստով կոճկուած սեղմելով մէջքը, ներքեւի մասը շըջագգեստ է, կարած վերևել մասի հետ, միացն առջելից, աջ կողմից, փոքր ինչ բաց է թողնուած, որ հագներուց յե-տոյ կոճկուած է մասի կողմում մի յափրաստով։ Եյս մասը արխալու-ղից երկար է և իջնում է կրունկներից մի քիչ (^{1/4} արշին) վերև։

Սրա երկու կողմում, արխալուղի գրպանների հանդէպ, բացուածքներ կան, որպէս զի այցտեղից կարելի լինի ձեռքը տանել գրպանը:

Եթիքացի վրացից հագնում են դեյրա, որին պառաւները լենին կար մընթանա են կոչում: Սա միանգամայն նման է իւրկին, միայն թևերով է, կուրծքը նոյնպէս յափրաստով կոմկում է, մէջքը նաւումնիվ սեղեւում, ներքեւ մասը առջնից մի քիչ բացում է և մաս կողմում կոճկում: Արխալուղի գրպանի հանդէպ բացուածքներ ունի Սովորաբար կարում են սև կտորից:

Մէջքին կապում են զօֆի — մի քանի արշին երկարութեան և քառորդ արշին լայնութեան սև կտոր, որ մի քանի անգամ լայնքսին նայելով կապում են և ծացքերը նորատիները կախ ձգում առջևից իսկ պառաւները ամրացնում կողքքին:

Հանդիսաւոր օրերին, մմեռ թէ ամառ, մանաւանդ Ծնող զիս զում, դէցի վացից հագնում են բարիպա, որ Ղարաբաղցա միւրեն է, կարում է մուգ կարմիր կամ սև թաւիչցից, իջնում է ծնկներից միքից ցածր. մէջքին նաւումնիվ սեղմուում է, կուրծքը եռանկինեամն բացուած է: Թօն քերը մեռքց ¼ արշին երկար է, հետզհոտէ ներդանում է և ապա կիսաբրոյր վերջանում: Արմունկից քիչ բարձր մի փոքրիկ բացուածք կայ, որտեղից դուրս են հանում մեռքը և թևքի մնացած մասը կամ քաշ ձգում, կամ ուօին ձգում: Քաթիփի բոլոր եղբերը և մանաւանդ կուրծքը և օձիքը, ինչպէս և թևերի ծայրերը զարդարուած են աղուէսի մորթու մօտ մի վերշոկ լայնութեան մորթով:

Ցղամարդկանց հանդերձը բոլորովին նման է միս գաւառների, մանաւանդ Կանձակին, հանդերձներին, ուսի և խուսափելով կրկնութիւննից՝ առաջարկում եմ կարդալ այդ մասին իմ «Կանձակի դաւանական աշխատութեան մէջ»:

ԳԼԽԻ ՑԱՐՄԴՐԱՄՆՔ

Կանաչք մազերը սանրելոց յետոյ երկու կամ մի քանի հուս են շինում, իսկ ականջի մօտի մազերը ոյսրելով այստերի վերայցվ անցկացնում, որպէսզի լայակը կապելուց յետոյ փոքր ինչ երեւց: Սա կոչում է նաւէ. որա վրացից կապում են ամկալաշտեկը. սա եռանկինեամն, սպիտակ կամ կարմիր կտոր է, որ ձգելով գլխին, անց են կոցնում կրափի տակ և ծացքերը գնդասեղով ամրացնում գագաթին կամ ուղղակի կտաց ձգում:

Սրա վրայ դնում են զաւուենելլան, ըստ Ծնողցոց միջնակոսպիս Սա մօտ մի վերշոկ լայնութեան և իւրաքանչիւրի գագաթի շրջապատի մեծութեան կարտօն է. վերան մի որ և է շօր քաշաճ: Կաւուրնել-

լրաց նոյն լավութեան և երկարութեան թաւշեաց մի ու կոռոր են կապում, որ կոչում է նակի աղոսիս: Նորատիներինը շատ անդամ մետաքսեաց թեզով կամ կապիտանով ասենագործան և լինում: Պատուրմելու մէջ դնում են կոպի:— սա կարում են այսպէս: վերցնում են կոպի աղոսւնաձև մետաքսեաց կամ այլ կոռոր, մէջը բամբակ դընում և կոդքելը միացնելով կարում, միանդամաշն աշխատելով, որ ծայրերը աւելի բարակ լինեն քան մէջ տեղը:

Պատուներից մի քանիսը գաւուրմելու և կոպի փոխարէն մի սղու իս նախ եռու կիւնածեւ և ապա մի վերշոկ լաշնութեան ծալում են և ճակատի փրացով անցկացնելով ծոճրակի փրաց հանգուստում:

Դաւուրմելու վրաց ձգում են | ըր զգիսի փոսթաթանք մի շաղ, որի ձախ ծայրը կզակի տակով անց են կացնում այնպէս՝ որ ամբողջ կզակի հետ բերանն էլ ծածկի և ապա այն ծայրը ձգում են նոյն շալի աջ ծայրի վրաց և վերջինս չետ ծալելով նորից անց են կացնում զյուի վրացով և զյուի ձախ կողմում ամրացնում, անցկացնելով շալի տակի հյու շարով, ուրեմն, բերանը ծածկուած է մնում:

Ռմանք. Էլ այս շալի վրաց մի ուրիշ շալ են առնում, որի ծայրերը կախ ընկած են թողնում:

Ըգանելիք:— Ռմանքին հացնում են գուլպա, որ իրենք են գործում և մաշիք (քաշ), որ գնում են զիւղում աշխատող մաշկակարներից:

Կաածումն:— Այս փայտնական սովորութեան մնացորդները գեռ ևս պահպանում են այս գաւառում ևս: Կիյուաւորապէս նորատի աղջիկները, ցանկանացով աւելացնել իրենց դեղնեցիութիւնը, ճակատին, այսուերին, թեկին, կրծքին խալեր են շինում արտպէս: վերցիշնալ տեղերը երկար տրորմուց չետոյ լնդակի մէջ թաթախած թելն ասեղով անց են կացնում կաշու միջով: լնդակը թորուելով կապուագոյն բիծ է թողնում, որ բաւական երկար ժամանակ մնում է:

Նախնական ցարդարանքի մնացորդներից արժանի է ցիշել նաև այն, որ աղջիկները ցուլունքներ և մանաւանդ մեխակներ են շարում թելին և կապում վերից, որ թէ գեղեցիկ լինին և թէ իրենցից անուշահուսութիւն բռու:

Նաև մազերը փափկացնելու նպատակով զրուխները լուանում են քացախով կամ մածնով և երբեմն մեխակացրովի: